



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԱՐԴԱԼՈՒՔԱՆ ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԵԼՆ

Ձ192

Մ-37

# ԿԱՐՈՍԻ

ԵՐԳԵՐ

ԵՐԵՎԱՆ 1922 թ.

891.99

S - 44





- 6 NOV 2011

891.99  
S-44

ԱՐԴԱԼՈՒՅՑԱ ՏԵՐ-ՀՈՎՆԱՆԵԱՆ

# ԿԱՐՈՍԻ

ଶ୍ରୀ ମହାପାତ୍ର

Երեւան  
Կենտրոնական Առաջին գրադարան  
|1922 թ.

12.08.2013

58409

## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հոգին անկասլտելի ե, նա ունի իր անձնական ապրումները և վորքան ել կեանքի հախուռն ելևշները երկաթեա ողակներով շղթայեն, վորքան ել միտքը ճնշե նրան, այնուամենայնիվ նա կդանի մի ակընթարթ արբենալու մեխակի բույրով, թեկուզ այն արիւնով սնված լինի:

Եվ այժմ, երբ շինարար աշխատանքին զուգընթաց հոգին ել հանգստի ե ձգառմ, իր ուրույն աշխարհի երազն ե տենչում, ես հնարավոր եմ համարում հրագարակ հանելու իմ ռկարոտի երգերը»:

Արշակուս Տեր-Հովհաննեան

1922 թ, Հուլիս  
Երևան



1986-2003

58409

20.08.2003

## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հոգին անկասլտելի ե, նա ունի իր անձնական ապրումները և վորքան ել կեանքի հախուռն ելևէջները երկաթեա ողակներով շղթայեն, վորքան ել միտքը ճնշե նրան, այնուամենայնիվ նա կգտնի մի ակրնթարթ արբենալու մեխակի բույրով, թեկուզ այն արիւնով մնված լինի:

Եվ այժմ, երբ շինարար աշխատանքին զուգընթաց հոգին ել հանգստի ե ձգտում, իր ուրույն աշխարհի երազն ե տենչում, ես հնարավոր եմ համարում հրագարակ հանելու իմ ռկոտի երգերը».

Արշալույս Տեր-Հովհաննեան

1922թ. Հուլիս  
Երևան



1986-2003

Թե երազները լեզու առնեին  
 Ու պատմեին մեզ թոփքը հոգու,  
 Հեռու ամենից տևնչանքը գաղտնի,  
 Հույզ-երջանկութեան բերկրանքը արբած,  
 Ինչպէս դողալով պիտի խամբեին  
 Մեր աննպատակ զարուներն ապրած,  
 Ինչպէս ցավելով պիտի հիշեինք  
 Մեր միապաղաղ որերը անցած:

---

Մատաղ գարնան, մատաղ հույզին,  
 Քո լսենթ հոգուն,  
 Արև որվան, անուրջ ձգտմաս,  
 Քո ճամբեքին,  
 Որ փռեցիր սրտիս վրա  
 Անծայր, անծայր  
 Ու քրքիջով, լսելառ երգով  
 Անդարձ անցար...

Երնեկ նրան, ով քո ճամփի  
 Վերջում կանգնած  
 Կընդառաջե քո երազին  
 Պուրպուր հագած,  
 Երնեկ նրան, վորին մեկ որ  
 Դու կժպտաս,  
 Խորաններիդ ծաղիկներով  
 Կզուրգուրես:

Ես ել հոգուս շեմքին նստած  
 Իմ մըմոռվ,  
 Իմ կարոտը կառնեմ հովից,  
 Դարձող քամուց  
 Ու կաղոթեմ, վոր քո ճամփեն  
 Ճողով, բույրով,  
 Միշտ զարդարվի ծաղիկներով...  
 Իմ երազով...

Երբեք, երբեք չպիտի  
Դու գիտենաս թե ինչ կա  
Գաղտնաբանում իմ սրտի,  
Մութ ծալքերում իմ հոգու:

Ուրախ, զվարթ եղիք միշտ,  
Պարով անցնի որդ թող,  
Հավատա վոր վոչ մի վիշտ  
Չունիմ կեանքում սիրտ մաշող:

Երբեք, երբեք դող չգգաս  
Թե աբածդ ես գիտեմ,  
Հավատա վոր ինչ անես,  
Խոնարհութեամբ կընդունեմ:

Հովի թեռվ, թռչնի երգով  
Հեքիաթներս քեզ պատմեմ,  
Սիրո ուժով, սրտի կայծով  
Ծաղիկներս քեզ բերեմ:

Մանուկ հույսով, վառ կանաչով  
Սրտիդ հեկը զարդարեմ,  
Խնկի բույրով, հոգուս երդով  
Կրակներդ բորբոքեմ:

Թռչնի երգով, հովի թեզով  
Իմ կարոտը քեզ պատմեմ,  
Բույր-հույզերով, հուր-երազով  
Կոկիծներս հաղորդեմ:

Ո՞վ ես, ասա, վոր այդպիս  
Կոնչում ես ինձ անբարբառ  
Ո՞վ ես, ասա, վոգու պիս  
Դիւթիչ, թովող ու անմար:

Այրել եմ հին նավերը,  
Անցել ծովը մեղքերի,  
Բայց դու նորից իմ սիրտը  
Ափն ես բերում անդունդի:

Ո՞վ ես, ասա, երդի պես  
Պարուբում ես իմ հոգին,  
Անցեալ կեանքիս պատկերներն  
Թաղում անդարձ, հավիտեան:

Այսոր դու կրկին հեռու ես ինձնից,  
Ինչպես այն որին, երբ դու չկայիր.  
Զութակն ե տրաում լալիս մոտիկից,  
Բայց ել քո հոգին չի զգում նոր թրթիռ:  
Քո հայեացը պազ... Մարել են կարծես  
Հույզերն այն մոտիկ, լույսը կանթեղի.  
Աղոթքի խոսքը դու մոռացել ես  
Եվ քո անուրջը՝ գարնան որերի:

Նստել ես իմ դեմ, բայց ինձ հետ չես դու,  
Այսոր ինձանից ավելի հեռու,  
Ռտար են կարծես տենչերը հոգուդ,  
Քան այն որերին, երբ չկայիր դու:

Հեռավոր երկնի պես կախարդող ե հոգիո,  
Աչքերդ՝ հմայող տրտմութեամբ շղարշված,  
Անուրջի ցողերով, լույսերով վողողված,  
Ապրումի բերկանքով ժպիտներդ են ոծված:

Քո քնքույշ ձեռքի պես խոսքերդ փաղաքշող,  
Զովաշունչ սիւքի պես մեղմ երգող, որորող,  
Քողարկում են հոգուդ գաղտնիքները տանջող,  
Սովերում են սրտիդ ապրումները անցեալ:

Սիրում եմ արտասվող հայեացքդ մութի պես,  
Քո ձայնի ամոթխած փայփայեանքը գաղտնի,  
Որ մեղմիկ որորվող լայնարձակ ծովի պես  
Դիւթական վողջույնով պարարում ե հոգիս:

Թող վոր մարեն, թող վոր հանգչեն հին կայծերը  
Մոխրածածկ  
Թող վոր չզգան, թող վոր չապրեն հին որերը  
Մոռացված,  
Թող չզարթնեն, փոշիանան հիշատակներն  
Այն անցած,  
Թող չխոցեն, չբզբտեն ցավոտ սիրտն իմ  
Տառապած:

Դալուկ աշնան հողմերը թող անցած որս  
Շղարշեն,  
Տառապանքի թերթիկները ոդում ցրեն  
Հողմահար  
Պայծառ որվա առավոտին հավատում եմ  
Ես նորեն,  
Գարնան քնքույշ ծաղիկները դեռ կբացվեն  
Մեզ համար:

Հովի թևերով մի բերկրանք սահեց՝  
Մի անուշ զնդոց իմ ծարավ հոգում.  
Հավիտեան ապրող մի ժպիտ փայլեց՝  
Մի ծաղիկ բացվեց իմ ցավոտ հոգում:

Հոգուս թևերը փարթամ ուռճացան,  
Խանդավառ կեանքի բույրով արբեցան.  
Գարունը եկավ, գարունն իմ կեանքի,  
Լուսաշաղ պատկերն իմ վառ տենչանքի:

Ես լեռն եմ սիրում.

Լեռները իրենց համը լոռւթեամբ,  
Վոր բոլոր ձայներն իրենց սրտերում,  
Կարծես ցավագին սաղմոս են կարդում  
Համը լոռւթեամբ:

Արցունքն եմ սիրում.

Արցունքը անդարձ, անհետ կորուստի,  
Վոր անապատի անծայր ավազում  
Կորած բեդվինի շիքիմն ե վնտուռամ  
Հուսահատ սգով...

Երազի պես դու քաղցը ես ու անհաս,  
Քո պալատը ամպերումն ե երկնահաս,  
Դժողքի պես հրդեհում ես իմ հոգին  
Ու սիւզի պես որոր կարդում իմ սրտին:

Դու ցնորք ես, մի պատրանք ես, այդ գիտեմ,  
Մի մոգական փայլուն աստղ ես երկնքում,  
Եթերի պես դու թովում ես ու ձգում  
Ապրումներս, գարուններս նոր բացված:

Եվ ես գիտեմ, ծաղիկներս կոկնած  
Պիտի թոռմին վառ արեի կարոտով,  
Սակայն մնա դու իմ հոգում միշտ վառված  
Ու իմ սրտին որոր կարգա քո երգով:

Մեղմ խշոց պարտեզում, թվի տակ  
Ու զսպված հառաչանք խոր սրտի.  
Մի հայեացք զմայլված, անգիտակ,  
Հիացմունք՝ մի անհաս պատկերին:

Լուռ ժամեր, որ որպես ակընթարթ  
Միշտ անցնում, միշտ սահում են արագ,  
Որ երբէք չեն տալիս ժամանակ,  
Որ սրտերն են պահում լուռ ու փակ:

Հրաժեշտ, ձեռքերի պինդ սեղմում  
Եվ դանգաղ քայլերի հեռացում.  
Ու ել իու սրտերի լուռ ձգտում,  
Միշտ լեցուն երազով, հույզերով:

Իրիկունն եկավ, զանգերը զարկին՝  
Հոգուս խորանի զանգերը տրտում,  
Վառեցի միակ կանթեղն իմ սրտում,  
Լուռ կծկվեցի հուշերիս շեմքում:

Անձրև ե գրսում, արցունքն ե հոսում,  
Վերջին արցունքը հոգնած աչքերիս,  
Երջանիկ որվա մի եջ եմ փնտոում,  
Մի ուրախ պատկեր ապրած որերիս:

Մարսում ե վերջին կայծը կանթեղի.  
Վաղուց եմ ծածկել հուշերն իմ սրտի.  
Անձրև ե գալիս, արցունքն է հոսում,  
Վերջին արցունքը ցավոտ որերի:

Այսոր կգամ ես քեզ մոտ,  
կգամ հոգով նորոգված,  
Այսոր կգամ ես քեզ մոտ,  
Ներկա, անցեալ մոռացած.

Մի պահ միայն քո դրկում  
Բույրերովդ արբենամ,  
Թող քո կը ծքին մարմարեա,  
Մի պահ լինեմ անզգա:

Այսոր կգամ քո գիրկը  
Համբույրովդ արբելու,  
Հոգուդ խարույկն զգալու,  
Կգամ թոփշքդ ապրելու:

Հաշվիր մեկ որ թե չկա  
Գուենկութիւն մեր կեանքում,  
Հաշվիր մեկ որ թե չկա  
Դատարկութիւն մեր հոգում:

ՀՕՅԵՐ ՀՈՅԵՐ

## ՖԱՅԱ ՆԻԿՈԼԱԵՎՆԱՅԻՆ

Դեռ չապրած, գեռ չարբած  
Բույրերով զարունքի,  
Թոշնեցին չբացված  
Կոկոններդ վոսկի,  
Մարմինդ գալարուն  
Զգտում եր գգվանքի,  
Խենթ-խելառ երգերի,  
Երազի, հույզերի:  
  
Բայց սկով եղերվեց  
Գարունը քո կեանքի,  
Արցունքով վողողվեց  
Քո սիրտը մանուկի,  
Պաղ ու գորշ մի աշուն,  
Մի անձուկ անհամբույր  
Տիրեցին քո հոգուն,  
Քո որին ծաղկաբույր:

Մոռացիր, մի հիշիր,  
Նոր կեանքով որորվիր...  
Տես, ահա քո առաջ  
Շարել եմ կերոններ,  
Զգտումն իմ վոսկեզո՞ծ  
Ես քեզ եմ նվիրել,  
Քո հոգուն տառապած  
Որհներզներս ձոնել:



Այս գիշեր լուսնի հետ դու իջար նազանքով,  
Քրկեցիր իմ հոգին քո պայծառ լույսերով.  
Ափերը երազած կանչեցին ինձ կրկին  
Քո պատրանք երգերով, քո անուրջ համբույրով:

Արշալույս-վերջալույս ցոլացին իմ հոգում,  
Ցողաշաղ առավոտ եղերվեց իմ կեանքում.  
Ու հպարտ, ու հզոր ես անկանգ կքայլեմ,  
Կհասնեմ, կհասնեմ իմ ցնորք ափերին:

Մութը շղարշեց լեռները բոլոր,  
Անդորրն ե իջել.  
Մութը շղարշեց իմ սիրտը մոլոր,  
Իմ երազները որոր ու շորոր:

Աստղերը ելան անուշ ժպիտով  
Քո աչքերի պես.  
Լույսերն իմ հոգու հանդան արցունքով,  
Երջանիկ որվա կորուստի ցավով:

## ՌՈՒՄԱՆՍ

Արծաթ լուսին, պայծառ գիշեր,  
Ծառ ու կանաչ, ծաղիկներ,  
Անուշ-մեղույշ ցողով-գողով  
Շշնջում են բերկանք, սեր:

Կանաչ դաշտի, մարմանդ հովի  
Քնքույշ բույրն ե խնկարկվում,  
Զնդան առվի, հստակ աղբըի  
Որոր-երգն ե թավալվում:

Հանկարծ մոտիկ թափուտներում  
Քո ստվերն ե երեսում,  
Լուռ նշանով, գաղտնի հույզով  
Կանչում ե ինձ անուրջով,

Գալիս անուշ համբույր տալիս  
Անքուն աչքիս կարոտով,  
Ելի փախչում հեքեաթի պես,  
Երջանկութեան որհներգով:

Ես գիտեմ մի աշխարհ, մի աշխարհ հոգեթով,  
Ուր երազ-հույզերի անուրջով եղերված,  
Վարդերի, հասմիկի ինկավետ բույրերով  
Ապրում ե մի վառ սեր, ակներով զարդարված:

Ես գիտեմ մի Եղեմ, ծաղկազարդ մի պարտեզ,  
Ուր կեանքն ե երջանիկ, ուր չկա հոգս ու ցավ,  
Ուր գգվանքն ե քնքույշ, անմարմին հովի պես,  
Ուր համբույրն ե անուշ, մեխակի թույնի պես:

Քեզ այնտեղ կտանեմ իմ հոգու թևերով,  
Քեզ այնտեղ կտանեմ իմ պայծառ երազով,  
Անուրջով կշինեմ հեքեաթի պալատներ,  
Կնիքնենք, կարբենանք ձիւնափայլ մեր սիրով:

Արծաթ կարկաչոն գետակ լինեի  
Նազան ծփանքով քեզ գուրգուրեի,  
Սլիքներիս մեջ պատկերդ առնեի,  
Կարդայի հոգուդ խոհերը գաղանի:

Քնքույշ սուրացող հովիկ լինեի,  
Նազուկ մատներով գեմքդ շոյեի,  
Գալարուն հույզով մեջըդ գրկեի  
Ու սե աչքերիդ նայեի երկար:

Նազան ծփանքով ծովակ լինեի,  
Մեղույշ նվագով որոր կարդայի,  
Կանաչ ափերիս նոշեիր անդորր,  
Փարած նոր հույզի, նոր երազների:

## ԱՇԽԱՆ ՆՎԱԳԸ

Տխուր ու տրտում տերեներն աշնան,  
Դալուկ, հողմավար, մաղվեցին ընկան,  
Ինչպես իմ կեանքի որերը մատաղ,  
Ինչպես իմ սրաի տենչերն աննման:  
Ել ծաղիկ չկա. դաշտը մահացավ,  
Բույր ու թովչանքը հառաչանը դարձավ.  
Լալիս ե ուռին շիրիմին հակված,  
Լալիս ե սիրտս իր շեմքին նստած:  
Լուռ ե ամեն ուր. վերջին տերեն ե  
Մահվան գողոցով անհույս երերում,  
Մի վերջին անգամ անցեալը հիշում  
Ու հառաչում ե մայր հողի գրկում:  
Միայն առուն ե տխուր արտասվում,  
Որպես նվազը բեկված լարերի,  
Եվ հեռուներում հուսահատ մարում,  
Ինչպես արել աշնան որերի:

---

Իմ գարուն կեանքի քարավանն արդեն  
Հոսուլ եր կայան,  
Երջանիկ որվա անուշ ժպիտով  
Զարկել եր վրան,  
Ծաղկեա պսակով, գոհար ակներով  
Սերս զարդարված,  
Ծունկի եր իջել քո դռան շեմքին,  
Քեզանով արբած.  
  
Որերիս վազքի տխուր երեկոն  
Հանգել եր հոգնած,  
Նոր արշալույսի նուրբ շողերն եին  
Ինձ վողջույն կարդում,  
Երբ դու քմահաճ մի անմիտ խաղով  
Ոնդիտակ տարված  
Իմ հեքեաթ կեանքի արել փայլուն  
Փշեցիր հանկարծ:  
  
Նորից աշուն ե, անճույս տառապանք,  
Անսեր ու անկեանք,  
Մարսուռ գողոցով լսվում ե սրտիս  
Վերջին հառաչանք.  
Պոկվում են ահա թերթերը հոգուս,  
Մայր հողը գրկում,  
Եվ լուռ ու անլաց, միմիանց խոնարհված,  
Մխում են, մխում...

---

Ալիքները ծովի՝ իմ հոգուն հալազատ,  
Միշտ մենակ ու միշտ ցուրտ, միշտ հպարտ ու  
ազատ,  
Միըս պես հավիտեան, տարիներ ու դարեր  
Գնում են միշտ հեռու, փնտռում են նոր ափեր։

Ալիք, ես ել նրանց պես միշտ մենակ, հոգիս ցուրտ,  
Զգառում եմ միշտ հեռու, անծանոթ եղերքներ,  
Նրանց պես միշտ ազատ, նրանց պես միշտ հպարտ,  
Միշտ դրկած անհունը ու երազ-հեքեաթներ։

Իմ այգում կը կին գարում ե իջել,  
Ծառերը նորից կանանչ են հագել,  
Եվ թափուտներում անուշ երազի,  
Զույգ հայացքներ են միմիանց պարուրվել,  
Առ շրթունքները նեկտար են քամում,  
Սիրոյ բաժակից իմ ծաղիկների:  
Գալարվիր ուժգին, կեանքն ե պայծառ,  
Ցավերը բոլոր ծածկել եմ քողով.  
Բերկրանքը վրսա երջանիկ դողով,  
Երազը դիւթիչ ել չի կրկնվում:

## ՄՈՌԱՑՈՒՄ

Այսոր լինենք երեխա,  
Թողնենք անցեալ ու ներկա,  
Արկի տակ փայլվլուն,  
Խաղանք մինչև իրիկուն։

Այսոր լինենք երեխա,  
Փարտեզ իշնենք վագելով,  
Կանաչի մեջ թավիշեա,  
Խնդանք պարով, երգերով։

Հաղա վագենք ես կողմով,  
Փնտռենք հատուտ ծաղիկներ,  
Զե, չե, վագենք են կողմով,  
Բոնենք գույն-գույն թիթեռներ,

Յամ ու հոգսը անխափան,  
Ուրվական ե մեր կեանքին,  
Բայց գեթ մի՛ որ, մի՛ վայրկեան,  
Դառնանք անհոգ երեխա։

## ՀԱՅԱՑՔՆԵՐ

Հայացքներ կան խորունկ, անհուն,  
Երկնի ասաղից ավել փայլուն  
Հայացքներ կան խորունկ, անհուն։

Մի ակընթարթ սեեռվում են,  
Գոհարների ցոլքից ել վառ  
Մի ակընթարթ սեվեռվում են։

Բիւր հարցերով շրջափակված,  
Հույզ-երազով լեցուն, ծփան,  
Բի ը հարցերով շրջափակված։

Խոսքն ու միտքը խոնհարվում են,  
Ծունկ են իշնում նրանց առաջ,  
Խոսքն ու միտքը խոնհարվում են։

Հայեացքներ կան խորունկ, անհուն,  
Վոր իշխում են մեր ողջ կեանքին,  
Հայեացքներ կան ծովից անհուն։

## ՀԻԱՄԹԱՓՈՒԹԻՒՆ

Սուտ են խոսքերը քո բոլոր,  
Գալարուն շարժումներդ՝ ոճային,  
Կեղծ են լույսերը քո բոլոր,  
Եվ փայլը հայացքիդ՝ թունավոր:

Մի պահ մոռացա, վոր կին ես,  
Մի կին ես ու նման բոլորին,  
Կարծեցի սարն ի վեր գու կելնես,  
Իմ հոգու ձգտումին, երազին:

Մսերդ են գերիշխում քո զիրգ,  
Մպիտակ քո մորթը լպիրը,  
Հոգի ու ձգտում խաբուսիկ,  
Շպարեն քո դեմքին գեղեցիկ:

Այս, ինչու այդպես ուշ հանդիպեցի  
Քեզ ես իմ ճամբին,  
Այս, ինչու այդպես քեզ ուշ զզացի,  
Ուշ երազեցի:

Զոր անապատ ե հիմի իմ սրտում,  
Ծաղիկ չի բուսնում,  
Ել երազներս թևեր չեն առնում,  
Ել թռիչք չունին:

Հիմի ձանձրույթն ե իջել իմ սրտին,  
Անտարբերութիւն.  
Անձուկն ե կրծում իմ անսեր հոգին,  
Անորոշութիւն:

Փուր գինու թասը ձոնեցի իմ ազատման ու  
փշքեցի բաժակը:

Ինչու ես եկել:

Կարծում ես ձմրան կիսին մանուշակներ  
կ'բացվեն սառած առուների ափերին...

Սակայն ինձ ի՞նչ...

Դու կարող ես ապրել և այստեղ, և այս-  
տեղ, ուր վար կամենաս, ինչպես կամենաս:

Ինձ ի՞նչ, թե դու այժմ ավելի գեղեցիկ ու  
խնկավետ կ'լինես, ինձ ի՞նչ, թե քո կուրծքը  
հույզերով լցուն՝ անհանգիստ կ'բարախի:

Ես սրել եմ իմ զիտակցութիւնը և վոչ մի  
խաբուսիկ պատրանք ել չի գրավի իմ հոգին:

Ասացին, վոր դու եկել ես...

Լավ, այդ ավելի լավ:

Ես կ'փորձեմ իմ հոգին և հավատա, վոր  
նա այլևս երբեք չի հուզվի:

Բայց գիտես...

Եթե ասացին, վոր դու եկել ես, հոգուս  
հեռավոր անկյունում մի զսպված՝ տարիների  
ծանրութեան աակ զսպված ճիշ լսեցի ու ինձ  
թվաց, թե արդեն գարնան ծաղիկներ են բաց-  
վել իմ պարտեզում:

Զմեռ ե... բայց ծաղիկներ են բացվել...

## ՎԵՐԱՄՇՈՒԹԻՒԹ

Ասացին, վոր դու եկել ես:

Բայց դու չպիտի գայիր. այդպես եր մեր  
պայմանը:

Մեր բաժանումը հավիտենական եր ու ան-  
հունն իր մեջ պիտի թաղեր այն, ինչ վոր զի-  
տեինք ես ու դու, ինչ վոր ապրել եին մեր  
սրտերը:

Ես արդեն գերեզման եի պատրաստել ու  
վերջին որհներգով թաղել մեր բոլոր ապրում-  
ների ակընթարթները:

Թաղել եի այն ու ելել կեանքն ապրելու  
այնպես, ինչպես նա կա, ինչպես պտտեցնում  
ե նա:

Բայց այսոր դու եկել ես:

Ինչու...

Դու կարծում ես այցի կ'զամ քեզ:

Կամ կանցնեմ քո պատուհանի տակով:

Այն որ, երբ դու գնացիր, ես վառեցի իմ  
սենեակի բոլոր լույսերը, իմ հոգու բռլոր դո-  
ները բացեցի և վորպես խրախնանքի որ, փր-

## ՀՐԱԺԵՇՏ

Սպասիր, վոչինչ պետք չե ասել:

Նոճիների այս թափուտում բաժանման  
հայտնութիւնը շատ ծանր կ'ինի և ույժ չեմ  
ունենա խոնքերիդ հարվածները կրելու:

Սպասիր, տես ինչ գրավիչ ե այս կանանչն  
ու ինչպես որորկում են նոճիների կատարները  
երեկոյեան զեփիւոփց, վորոնց մեջ մենք, վոր-  
պես երկու անբաժան մասնեկ, լրացնուու ենք  
բնութեան պատկերը:

Սպասիր, թող ժամանակը սահի անկանգ  
ու ակընթարթը հավիտենականութիւն դառնա,  
անյայտ որերի պատկերը հեռացնելու ինձնից,  
վորոնց մեջ պիտի լողամ խորտակված նավի  
կայմի նման,

Եվ լոիր. լռութիւնը թող ընդհատվի համ-  
բույրով. վերջին հրաժեշտի գաղտնի դողը մեր  
մարմինների հպման անհուն կրքի փոխվի, թող  
հուսահատութիւնն ու անկարելիութիւնը մեկ  
ակընթարթ ևս վերանա ու անեռութեան մեջ,  
այս նոճիների տակ մի պահ ել մռանամ ա-  
մեն ինչ, ապա բաժանման բոցավառ խարույկն  
ընդգրկե. բայց առանց բառերի, առանց գիտակ-  
ցելու, պոանց զգալու...

Լ 0 Ի 3 0 Ե Տ Ե Ս Ե Ա Ե Լ

«Տանջանքի լարեր» — ոպառված ե.

Եռւթով լույս կտեսնի

1. Սովը — պահմ
2. Նվազներ — արձակ երգեր.

ԳԻՆՆ Ե ՄԵԿ ՄԻԼԻՈՆ Բ. Հ. Խ. ԴՐ.

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՔՍԱՆ ՀԱԶԱՐ Բ.

In



58409